# ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

«Բագուի Ձայն»-ի նախորդ համարում մատնանշուեց էջմիածնի մի հակաժողովրդական քայլը։ Այսօր կանգնած ենք էջմիածնի մի նոր ապօրինութեան առաջ, որ նոյնքան բնորոշ է էջմիածնի քաղաքականութեան տեսակէտից։ Մեր խօսքը վերաբերում է այն մասին, թէ ինչպիսի վերաբերում է ցոյց տալիս էջմիածինը դէպի Համազգային Մեծ տօնը առհասարակ և դէպի Թեմական Յօբելեանական Յանձնաժողովը մասնաւորապէս։ «Հորիզոնի» վերջին համարում (№ 202) զետեղուած է Թեմ. Յօբելեանական Յանձնաժողովի հրաժարականը։ Բայց ինչու է նա հրաժարուում։ Ահա նրա պատճառաբանութիւնը.

«Թեմական Յօբելեանական Յանձնաժողովը գիտակցելով այն բոլոր անախորժութիւններն ու անյարմարութիւնները, որոնք կարող են ծագել երկու մասնաժողովների միևնոյն քաղաքում և միևնոյն հասարակութեան մէջ գործելուց և չկամենալով Համազգային այդ Մեծ Տօնին միութեան փոխարէն բաժանում հանդէս բերել, որոշեց հրաժարուել»,

Հայ հասարակութեանը անկասկած յայտնի է, որ այդ յանձնաժողովներից մէկը մի խումբ մարդկանց ներկայացուցչութիւնն էր, մինչ դեռ միւսը Թիֆլիսի հայ հասարակութեան, ազգային-կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչների կողմից էր ընտրուած։ Յայտնի է նաև այն, որ Թիֆլիսի թեմակալ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը ստանձնելով իր պաշտօնը՝ ձեռնարկեց այդ երկու յանձնաժողովների միացման գործին։ Փոխադարձ զիջումների հողի վրայ կայացաւ համաձայնութիւն և այսպիսով կազմուեց մի Յանձնաժողով։ Յայտնի է նոյնպէս «մշակականների» անկօրրեկտ արարքը. նրանք երկար բանակցութիւնից և զիջումներից յետոյ համաձայնութեան են գալիս և ապա առանց որևէ բանաւոր պատճառաբանութեան մէկը միւսի յետևից հրաժարուում են և նորէն երևան է գալիս Մասնաժողովը, որ ժողովում անօրինական էր համարուել։ Հրաժարուող անդամների տեղ ընտրուում են նորերը, իհարկէ, էլի հասարակութեան և կուլտուրական-ազգային ներկայացուցիչների կողմից։

Ահա այս յանձնաժողովի ընտրութիւնը և կազմն է, որ չի հաստատել կաթողիկոսը և դիւանը առաջարկում է Յօբելեանական Յանձնաժողովին և Մասնաժողովին գործել առանձին-առանձին։ Եւ հէնց այստեղ էլ կայանում է էջմիածնի վանականների հակաժողովրդական քայլը։

էջմիածինը իր՝ վարմունքով ոտնահարել է ժողովրդի իրաւունքները և ընդառաջ գնացել մի խումբ մարդկանց ոտնձգութիւններին։ Մենք, ի հարկէ, հեռու ենք այն մտքից—Թեմական Յօբելեանական Յանձնաժողովը համարել իսկական ժողովրդական ներկայացուցչութիւն—բայց, միւս կողմից, չենք էլ կարող մի րոպէ անգամ մտածել, թէ կարող է գտնուել առողջ բանականութեան և մտքի տէր մի անհատ, որ այդ երկու մարմինները—մէկն ընտրուած մի խումբ մարդկանց և միւսը ամբողջ Թիֆլիսի կուլտուրական-ազգային հիմնարկութիւնների ներկայացուցիչների կողմից—դնէ միևնոյն մակարդակի վրայ։ Բայց [illegible] ենք ասում այս տարրական ճշմարտութիւնները։ Կղերը միշտ էլ եղել է թշնամի ժողովրդական իրաւունքների և միշտ էլ հետևել է իր քաղաքականութեան։ Նա այդպիսին է եղել ամենուրեք, ինչ հորիզոնի տակ էլ նա պարփակուած լինի։ Տարօրինակ կլինէր, եթէ բացառութիւն կազմէր հայ հոգևոր դասը։

Այս բոլորը մեզ համար պարզ լինելով հանդերձ, միանգամայն անհասկանալի, չմտածուած և անբանական է երևում Թեմական Յօբելեանական Յանձնաժողովի հրաժարականի հարցը։ վերջինս ընտրուած է աւելի քան օրինաւոր կերպով ներկայացուցչական ժողովում, ուր նախագահում էր ինքը թեմակալ առաջնորդը։ Այդպէս հեշտութեամբ հրաժարուելով իր պարտականութիւններից, Թեմական Յօբելեանական Յանձնաժողովը այնքան էլ փայլուն և նախանձելի գիտակցութիւն երևան չի բերում ժողովրդական շահերի, նամանաւանդ իրաւունքի ըմբռնման տեսակէտից։ Չէ որ նա պարտաւոր էր իրերի դրութիւնը պարզել իրեն ընտրող ներկայացուցիչների ընդհանուր ժողովում և ապա այդտեղ հարց յարուցել—եթէ հարց լինէր—հրաժարականի, առհասարակ ապագայ անելիքի մասին։ Թեմական Յօբելեանական Յանոնաժողովի քայլի մէջ դժուար չէ տեսնել մի պասիւ վերաբերում ժողովրդի իրաւունքի պաշտպանութեան հանդէպ, և որպէս այդպիսին, որպէս մի փախուստ, նա բոլորովին դատապարտելի է։

Մեր խորին համոզմունքով նա պիտի միանար իր ընտրողների հետ և դիմադրէր էջմիածնի այս հակաժողովրդական քայլին։

Ս.